

16292

891.99
789

20 03

298

6
891.99 9614 90066668

7-89

u.v

Ա Ք Յ Ի Չ Չ Ի

(Պատկեր)

459
37



Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպար. Յ. Մարտիրոսյանցի. | Կոնգր. Ս. Մարտիրոսյանց.

Օրբեմանյան փ. № 1 | 2.

1896

3588

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го іюня 1896 года.

С К Б Т 2 2 Т



Ա Ք Յ Ի Չ Չ Ի



Ա.

զատ զետըր կատաղած զալիս
էր, ահագին քարափ-
ներ և արմատահան ա-
րած ծառեր ալիքների
հետ բարակ տաշեղի նը-
ման խաղացնելով՝ քարշ
էր տալիս:

Հտողը կը կարծի, թէ գարունն է ուրեմն:
Ո՛չ, գարունը չէ, աշունն է:

Ամենքին յայտնի է, որ Ազատ կամ Գառ-
նու կոչուած զետըր միայն գարունն է գժուում
ու փրփրում՝ մարդկանց վնասելու համար, իսկ

տարուան միւս երեք եղանակներին՝ գետի տաշ-
տակի մէջ մի փոքրիկ առուակի չափ ջուր մերթ-
խաղալով, մերթ կ'չկչալով, երբեմն համրացած,
հանդարտ հոսում է գետի տարածութեան վե-
րին մասերի գիւղերի առաջով և ներքեւն իս-
պառ ցամաքում: Իսկ այսօր աշունն է և Ազա-
տը գարնանից աւելի յորդ փախչելով՝ շունչը
միայն Նրասխումն է առնում:

Զարմանալի չէ, Գեղարդայ սարերում մեծ
հեղեղ է եղել, Գեղարդայ ձորը լցուել է: Ո՞ր
գետի հետ այդպիսի բան չի պատահում, որ Ա-
զատ գետի հետ չպատահէր:

Անտարակոյս՝ գարնան յորդացած պահուն,
կամ այսպիսի հեղեղների ժամանակ է «Ազատ»
անունը կ'նքել օտարականի մէկն այսօրուան ան-
բաղդ կալանաւորին՝ Ալա, կամ Գառնու գետին:

Ուրիշ անուն չի կարելի ընծայել մի գետի,
որ Գեղարդայ անդնդալին քարաձորերի սրտից
խեղդուելով ու ճնշուելով՝ տափարակի վերայ որ
ընկնում է, ազատ շունչ է առնում և դաշտա-
վայրի ընդարձակութեամբ տարածուած հարիւ-
րաւոր գեղջուկների բահերի սուր ծալքերով կը-
տոր կտոր եղած, իր ամբողջութիւնը կորցրած՝

առունների է բաժանուում և խեղճացած՝ գնում
է իսպառ անհետանալու գիւղերի արտերի ու
այգիների մէջ:

Թէ ինչ անուններ են կրել հայկական տի-
րապետութեան օրերն Ազատի ասիերին փռուած
տեղերը, ինչպէս և առ հասարակ հայ աշխար-
հի իւրաքանչիւր գիւղը, քաղաքը, լեռը, ձորը,
գետը, առուն և այլն, այս մի դժուարալուծելի
խնդիր է:

Ձեմ ուզում ասել, Գառնու գաւառի ո՞ր
գիւղերի մէկից, թէկուզ անուանենք Գ. գիւ-
ղից, ոչ հեռու ժամանակներում, մի մատաղա-
հաս կին, երեկոյեան մթնաժեռին՝ դուրս եկաւ
ու արագ քայլեր անելով, հեւալով ու հեթեթա-
լով՝ ծուռեց դէպի Ազատ գետի ասիւր:

Դէպքս պատահեցաւ այն աշունքը, երբ
Ազատ գետը մեծացել էր:

Եկաւ կիսն և գլուխը դէմ տուեց գետի ա-
փին զտնուած ուռի ծառի բնին:

Գունաթափ էր նա, շատ լալուց՝ աչքերն
ուռել էին: Նայած նորատի հասակին և նոր
կերպասեայ հագուստներին, կարելի էր վճռա-
պէս ասել, որ տիկինը դեռ այսօր է կէս կոչու-

մին տիրացել, կամ, ուր զիտէ, եկեղեցու սեղանի առաջից, թագ ու պսակի տակից է փախել և կամ պսակ չգնացած՝ իւր ատելի, ապագայ, չսիրած ամուսնու գիրկը չընկնելու համար է շունչը գետի ափին առել:

Նրա գլխի փաթաթաններն ու քնթկալը զգգգուած՝ անկարգ կախկախուած էին ուսերի և ներքին ծնօտի վրայից:

Խղճալու էր ուրեմն այն անբաղդ երիտասարդին, որ զրկուում էր մի այսպիսի չքնադագեղ աննմանից:

Արդարև հրեշտակային գեղեցկութիւն ունէր նորահարսը. որքան և դալկացած ու քրքրմագոյն դէմք առած՝ բայց և այնպէս տեսնողը խելակորոյս կը լինէր:

Այս ամեն մանրամասնութիւններն, ի հարկէ, լոյս ցերեկին դիտելու զործ էին, ապա թէ ոչ, գիշերը մենք մի խաւար ստուերից աւելի ոչինչ չէինք տեսնում:

Ոչինչ չէր կարելի գուշակել այս կնոջ փնթփնթոցից:

Մեր աշխարհում՝ այս հասակում ու այս վիճակում կանանց ամենամեծ պարկեշտութիւնը

լեզուի հետ երեսը թանձր քօղով ծածկելն է համարուած: Մենք այսքանով ևս գոհ լինինք, որ գեղեցկուհու զուլին առանց ծածկոցի է և շրթունքների շարժումից անկապ բառեր ենք լսում:

— Իլ ուր եմ ապրում... Վա՛յ իմ գլխին... սեւապսակ Վարդան ջան... Հինգ տարի գլուխդ իմ համար մահի տուիր, գիւղի ու դաւառի կրտրիճներին չթողիր մեր շեմքով խնամախօս անցկացնելու, որ քո գլխամեռ Մարջանին դեռ ոչ մի խօսք չասած՝ դեռ հարսն ու փեսայութեան նաթօտը վզերիցս չըվերցրած՝ հարսանիքիդ վերջանալու իրիկունը, նորահարսիդ անտէր թողաս ու ձեռ ու ոտդ կապկապուած՝ բերդը մտնիս: Հիմի լինջ է իմ անունը. հարսն եմ՝ հարսը չեմ, աղջիկ եմ՝ աղջիկ չեմ:

Հողը գլխին, մօխին արեւիս, գիւղը դատարկուել, քաղաք է գնացել, ինձանից թագցրին, բան չասացին, բայց դրան ծակից սև խաբարն ականջիս զիպաւ: Իգուց քեզ կախում են...

Խեղճ իմ մէր, — աման, էնպէս արէք, որ սև սրտի աղջիկը չիմանայ, զգուշացրէք ամենքին...:

Անբաղդ ծնող, էնքան իրան կորցրել է, որ նարօտը վզիս մոռացել, թողել է... ան, կախուլիս դու, միրզա Ֆարմասոն, բարով քո կինն էլ իմ պէս անտէր մնայ...

Պարզուեցին մեր համար Մարջանիկի կցկրտուր խօսքերը, հարսանիքի վերջին երեկոյին, դեռ ամուսնական քաղցրութիւնը չըլաջելած՝ անունը հարսն, ինքն օրիորդ՝ զրկուում է հինգ տարի իւր սիրովը կեանքը չետ դրած փեսացուից:

Նրա փեսացուն յանցանքի մէջ բռնուել է և կախաղանի է դատապարտուել և մի ինչ որ միրզա Ֆարմասոնի մատը կայ ոճրագործութեան մէջ:

Ֆարմասոն անուն չըկայ մեր աշխարհումը, Ֆարմասոնը մի նախատական խօսք է, որ ժողովուրդը յատկացրել է իւր փառաստանի, կամ բողոքական դարձած հայ եղբօրը: Երևի, այս կոչումն իբրև անուանարկութիւն տուած է Մարջանի արեւնապարտ ոխերիմին:

Մենք չենք հետաքրքրուիլ անպատիւ մարդի իսկական անունն իմանալու, Մարջանի հետ մենք նրան միրզա Ֆարմասոն անունով կը ճանաչենք:

Ո՞վ և ի՞նչ պաշտօնի տէր է այս մարդը, մենք դարձեալ առ այժմ չենք քննիլ, այսքանը միայն հաստատ է, որ նորապսակներին սեւապսակ անողը Ֆիլիս է, դրագիր է, կամ մի բարձրաստիճան ծառայող է:

Միլլա, աղայ, կամ Բէգ պատուանունով է կնքում ժողովուրդն առ հասարակ ամեն մի չօրհրդանքի:

— Մնաց բարև, իմ հարսնութիւն, որ չըտեսայ, Մարջանը գնում է էն աշխարհումը հարսը դառնալու իր Վարդանին, հալէֆն իմ ճակատին էսպէս էր գրուած, ասաց աղջիկն ու երեսին երեք անգամ խաչ հանեց և ձեռքերը ծառից հեռացրեց:

Գետի զոչգոչիւնից մի խուլ չըպպոց միայն լսուեց: Այնուհետև ամենայն ինչ լուռ էր և միայն կատաղի Ազատ գետն էր իւր ձայնն աշխարհքովը մին արել: Իւր քշած քարերի և մեծամեծ ծառերի հետ նա տանում էր և մի զիակ:

Վաղաժամ կեանքից զրկուած Մարջանիկն էր նա:

Բ.

Աշնան վերջերն են:

Գառնիբասարի բոլոր այգիները քաղուած են, այգիների բերքերը մառաններում զետեղուած են:

Գառնիբասարն Ազատ գետի հոսանքով ոռոգուող դաշտավայրն է, որի մի թղաչափ հողն անմշակ չի մնում:

Հատ ընդարձակ է Գառնիբասարի դաշտանիստ դաւառը:

Գառնիբասար անունի վրայ մոլորուել պէտք չէ: Այդպէս է կոչուում այն դաւառը, որի սկիզբը համարուում է պատմական Գառնի աւանը:

Այնչ Էնմ կարող Գառնիբասարի դաշտի վրայ փռուած գիւղերի հաշիւը տալ, կամ անունները թուել. յիսունից եթէ աւելի չեն, պակաս չեն:

Գիւղ երևում է, որ թուես. անձանօթի համար ողջ դաւառը մի ծառադարդ, լայնանիստ այգի է, որի արևելքը հիւսիսով Գեղարդայ սարերն են գրկել, արևմուտքը հարաւով Մասեաց շղթան է պատնէշ կապել:

Գնում ես, գնում ես՝ ամառը՝ փոշոտ, ձմեռը՝ ձիւնոտ, զարուն ու աշունը՝ ծնկնահար ցիւտ, լայն արքունի ճանապարհովն և ծառերի մէջ գտնում ես գիւղեր, համարեա, կպած իրարից. կէս ժամաչափ տեղում բուսնում է մինը. հինգ բոպէ՝ միւսը, դարձեալ տաօը վայրկեան՝ մի երրորդը, չորրորդը, հինգերորդը և այլն: Կարծես, թաղեր են՝ այգիներով միմեանցից բաժանուած. իսկ ծայրը վերջանում է Արտաշատու դաշտի հարաւում՝ Խորվիրաբի բաց տարածութեան վրայ:

Հատ տեղ գիւղերն էնքան մօտիկ են, որ մի գիւղից միւսը կանայքը կրակի, կամ փոխ հացի են գնում, ինչպէս հարևանների մէջ ընդունուած սովորութիւն է:

Ել ինչ ասել կուզի, որ բազմաթիւ գիւղեր իրար հետ մի տան պէս են կառավարուում, հարսանիքի, մահենիքի իրար հաւարի (օգնու-

(Թեան) հասնում, ձմեռն իրար ջան ասում, ջան լսում. ամառը, ջրբաժանութեան ժամանակ՝ միմեանց զլուխ ճղում:

ԳԺՈՒԱՐ է հաստատապէս որոշ բան ասել այս դաշտավայրի նախկին բնիկների մասին. այսօրուայ բնակիչները Պարսկաստանից 1827 թուին գաղթած Հեր և Զարեանդ զաւառների բարբառով խօսող հայեր են:

Մեզ Գառնիբասար տանողն այս հայերի երիտասարդ ներկայացուցիչներին միջից՝ Վարդան Թարվէրդովն է:

Քսան, քսան ու Հինգ, կամ աւել տարի է, որ գառնիբասարցիք հողագործութեան հետ այգեգործութիւն ևս անում են:

Նրանց հողն առատ խաղող է տալիս, բայց որովհետև Գառնիբասարի գիւնին որակութեամբ Արարատեան դաշտի գիւնների կարգում վերջին տեղն է բռնում, ժողովուրդն ստիպուած է գիւնին օդու փոխելու:

Մի օր կար, որ այդ հնարքը շատ օգտուէտ էր, իսկ այսօր փոքր ինչ գժուարացել է:

Այսօրուան օղեհանութեան կարգերը նոյնը չեն, ինչ որ յառաջ էր:

Յառաջ մաքս չկար, ով ոք օղի քաշելու կաթսայ ունէր, թէ իւր արաղն էր քաշում, թէ հարեանինը:

Գինը մի անգամ որոշուած էր. շատ խաղող ունիս, պղնձատիրոջը շատ օղի կը տաս, քիչ ունիս՝ քիչ կը վճարես:

Մաքսային «~~խառն~~» հին կարգերը ոչնչացրեց:

Վարդան Թարվէրդովն իր պապեհական մնացած արաղի կաթսայովն ապրողներից մէկն էր: Նա ինքը մանուկ հասակում զրկուել էր ծնողներից ու սրա նրա դռներումն էր ապրում: Երբ խելքին հասաւ, ոչինչ չըգտաւ հայրենական ժառանգութիւնից, միայն մի հասարակ խարխուլ տուն՝ երկու երեք կիսաւեր յարկերով և մի արաղի կաթսայ:

—Թող անշաղկապ լինի իմ հացն, սոսաց Վարդանն ու արաղ քաշող դարձաւ:

Երկար չուեց Վարդանի արհեստը, նոր օղեհանութիւնը նրա հացը խլեց:

Այսօր օղի քաշելու համար առաւել բարդ և թանկագին նորաձև կաթսայ պէտք է գնել, օղի քաշելու իրաւունք պիտի ձեռք բերել և որոշեալ մաքսը կանխաւ պիտի վճարել:

Ոչ միևնույն կարող էր անել Վարդանը, ոչ միևնույն:

Անհայտ ու անգործ մնալու չէր. Վարդանը մտածեց իւր արհեստը ձեռաց չլթողնել: Քանի թէ հարուստների զուներին օրավարձ մշակ դառնալ, աւելի ձեռնտու էր իւր հին ձեռքի կաթսայով փոքր այգետէրերի արաղը ծածուկ քաշել, թէ նրանց օգուտ տալ և թէ իւր քսակին, ուրեմն ամէն ժամանակ «սպիտակ» հետ գործ ունենալ:

Աքցիկզի է կոչում ժողովուրդն օղեհանութեան վերայ հսկող պաշտօնեաներին, որոնց ճիշդն ասած՝ շատ չի սիրում:

Հետզհետէ ժողովուրդն ուսումնասիրում է նոր կարգերը և այն նեղութիւնները չի կրում կեղեքիչ և անբարեխիղճ մաքսային ստորին ծառայողների ձեռքից, ինչ որ առաջ էր:

Պէտք է խոստովանիլ, որ շատ հազուադիւր էին սկզբներումը գործի սրբութիւնը յարգող, ժողովրդի զրութեան մէջ խոր թափանցող, օրէնքի տառն արդարապէս գործադրող պաշտօնեաներ: Մեծամասնութիւնը տղրուկներ էին,


որոնք աղքատ զեղջուկի արիւնը ծծելու դիտաւորութեամբ էին իւղալի պաշտօնը ձեռք բերում:

Վայն ու սևը տարել էր այն գիւղացուն, որ վերջիններիս նման «սպիտակ» ձանգն ընկաւ: Ել պրծնում չկար:

Դեռ չարագործութիւնների պարկի կապը չարձակած՝ ասենք, որ գիւղացիքն ևս իրանց կողմից պարտքի տակ չէին մնում. խաղ չէր մնում, որ չխաղալին իրանց ատելի զանազան հայ ու օտարազգի միրգա, բէգ, կամ աղայ կոչուած աքցիկզիների զլխին:

— Բնաւ հոգուս մեղք չեմ համարում գողնողի արաղ քաշելը, արդարացնում էր իւր արարքը Վարդանը. եթէ այդ աքցիկզիքը օրէնքով սահմանած վճարքն առնէին ու այգետէրերին չնեղացնէին, ես իմ արաղի կաթսան իմ ձեռքով կը ջարդէի, կերթայի գործարանատիրոջ դրանն օրավարձ բանուորութիւն կանէի, բայց ո՞ր աքցիկզին է կարգին գործ բռնում: Դու գնում ես, տանջուում, չարչարուում, այգին մշակում, հասցնում, որ սիւս սրտով տուն պահես, երեխէք կառավարես, ապրիլից սկսած զան, քո աշխատանքը ձեռքից քանդես, լափես:

459
37



Մենք վերջումը կը տեսնենք, որ իրաւունք ունէր Վարդանը. այժմ այսքանն ասենք, որ նրա տհաճութեան կիրքն այն աստիճան զրգրուեց, որ ուխտեց այնուհետեւ մինչև իւր ամուսնանալը իւր կաթսաներով ձրի օգնութեան հասնել քիչ կնճեռ ունեցող այգետէրերին, այնպէս անել, որ աքցիղչիքը մի հատ կոպէկ չկարողանան դուրս տանել խեղճերից:

Իւր հասկացողութեամբ՝ Վարդանն իւր ապօրինի վարմունքով ամենամեծ առաքինութիւն էր գործում:

Նրա դատողութեամբ՝ Աստու պատուիրանից շեղուող, ճշմարտութեան ճանապարհից հեռացած, դժօխքում կպրէ կարասի մէջ յաւիտեանս թաղուած մնալու և տապալուելու արժանի մեղաւորներից գլխաւորներն աքցիղչիքն էին, որոնց դէմ կռուելն իւր համար բարոյական պարտականութիւն էր համարում:

Կատաղած էր Վարդանը մանաւանդ՝ աքցիղչի միրգա Փարմասոն բէգի դէմ, որի հետ շատ ու շատ անգամ հանդիպումն էր ունեցել:

Կարծես, բոլոր սատանէքը Փարմասոն բէգի լրտեսներն էին, մէկ էլ տեսնես, մութը գի-

շերին՝ այնքան մութը, որ մատդ մարդի աչք կոխես, չի տեսնիլ, երբ Վարդանն արաղի օջաղի տակն է ցախ դնում, կամ կնճեռը շալակած բերում է կաթսան լցնելու և կամ օղին է տեղաւորում, ահա մէկն իւր կուռը բռնեց ու դառն նենգաւոր ժպիտով ատամները ցոյց տուեց:

Վարդանն իսկույն հասկանում էր, որ սա իւր ոխերիմ թշնամի Փարմասոն բէգն է:

— Իլի, աղա՛յ:

— Իլի, Վարդան:

— Հապա մի բուռն արիւնիդ չես արտօտում:

— Հապա բանտում փթելուց չես վախճում:

Վաղուց մէկն ու մէկի կողմից այս սպառնալիքները կատարուած կը լինէին, եթէ օղետէրերը Վարդանին չհեռացնէին ու միրգա Փարմասոնի սիրտը շահած՝ ճանապարհ չը դնէին:

Քիչ անգամ չէ պատահել, որ օղետէրերն ատորճանակը խլել են Վարդանի ձեռքից, երբ վերջինս դէմ է տուել Փարմասոն բէգի կրծքին:

— Վնաս չունի, Վարդան, վնաս չունի, գործդ տես, ասել է Փարմասոնն ու արաղի տիրոջից կաշառն առել, զրպանը դրել ու հեռա-

ցել, և Վարդանը չի քաշուել նրա ետևից մի քանի սառը նախատական խօսքեր շռայլել, որոնց Փարմասոնը ծիծաղելով է պատասխան ուղղել:

— Դուք ինքներդ էք երես տալիս էդ անօրէններին, նեղանում էր Վարդանն օղու տէրերի վրայ. քան թէ կաշառքով ոտներին աւելի տեղ էք անում, թողէք՝ ես միրգա Փարմասոնին քնացնեմ, գնդակիս մատաղ տամ, միւսներն էլ ձեր դուռը չեն գալ:

— Չէ, Վարդան, չէ, խնդրում և սիրտը նստացնում էին արաղի տէրերը, դրանով դու մեր հացը բոլորովին կտրել կըտաս. եթէ դու մեր լաւն ես ցանկանում, ձայն մի հանիր, գործիդ կաց:

— Թող ձեր ասածը լինի, բայց մի օր ես միրգա Փարմասոնի աչքին կերեամ:

Եւ Վարդանը շարունակում էր իւր գործը:

Գ.

Գիշեր է, մէջ գիշեր է, կէս գիշեր է, հաւախօս է, Աղամայ մուծն է. վերջապէս գիշերուայ իր ժամն ու ժամանակը կուղէ, թող լինի, եթէ մէկը կամենայ Վարդան Թարվէրդովին տեսնել, նրա հետ գործ ունենալ, այնպիսին դուր կերթայ Վարդաննեց դուռը ձեռնու: Մի տեղ կայ, որ միշտ կարելի է նրան գտնել:

Խօսքս ձմեռուան, փարնան և ամառուան եղանակները մասին է. իսկ աշնանը՝ Վարդանին կարելի է տեսնել՝ կամ սրա նրա արաղի օջաղի մօտ գործելիս և կամ դարձեալ նոյն տեղը:

Այդ տեղը զիւղի արեւելեան ծայրումն է, հասրաթի տան դրսի պատի տակին, ուր ամառ ձմեռ վառելու համար կիտուած են ցախերը:

Ցախերի վերայ գիշերը մթութեան մէջ մի մարդկային ստուեր միշտ կարելի է տեսնել: Ինքը Վարդան Թարվէրդովն է ստուերը:

Ներելի է, եթէ չափազանցութեան հասած լինիմ, որովհետեւ այն օրից, երբ Վարդանի երեսի ու ընչացքի լերկութիւնը ծածկուել է թուխ, մետաքսի պէս փափուկ մագերով, Վարդանը Հասրաթի ցախերի վրայ նստած՝ նրա տան սլահապանութիւնն էր անում. համապատշաճ նմանութիւն այն թափառաշրջիկ շանը, որ իւր տիրոջ հացը կուտի, օտարի դրանք կը հաչայ: Զանազանութիւնն այսքանն է, որ մեր երկու տանի շունը չէր հաչում, այլ լուռ ու մունջ աչքերը տան անկիւնին յառած՝ նստած էր. ուրեմն որսորդի շուն էր նա, որսի հոտ էր առել և հսկում էր, որ չփախչի:

Սուտ չէր, մի քաղցրահամ և թանգ գնահատելի որս կար Հասրաթի տանը, որին շատ երիտասարդներ կամեցել են հասնել, բայց քաջ որսորդ Վարդանի երկիւղից, կամ աւելի ճիշդը սիրուց՝ չեն կարողացել, կամ չեն կամեցել մօտենալ:

Հասրաթի աղջիկ Մարջանիկն էր համեղ որսը:

Հինգ տարի էր, Վարդանի սէրը կպել էր

Մարջանիկին և նա չէր հեռանում նրանց ցախերի վրայից:

Եթէ Հասրաթը գաւառի առաջաւոր Հաբուստներից չլինէր, այլ դիրքով և կարողութիւնով Վարդանի հաւասար մարդ լինէր, աւելորդ էր հինգ երկար տարիներ մի աղջկայ համար զլուխը մահի տալ: Խնամխօս կուղարկէր, կամ ուղղակի կը փախցնէր, կը վերջանար:

Դժբաղդաբար՝ մի անտէր, օտարի դրանք մեծացած, անյայտ անձնաւորութիւն էր, որ միայն ծառայի տեղ կարող էր բռնել Հասրաթի դրանք:

Բուն այդ յարգելի պատճառով՝ Վարդանը հինգ տարուայ մէջ և ոչ մի անգամ ոտն իւր կարպետից դուրս չի երկարացրել: Բարւոք է համարել Մարջանիկի սիրուն մեղրամոմի նման հալուել ու մաշուել, քան թէ իւր չափը չճանաչելով՝ սառը պատասխան ստանալ:

Այսչափն էլ շատ մեծ շնորհք էր ընդունում Վարդանը Հասրաթի կողմից, որ նա հաստատ գիտելով, թէ իւր դրանք մի օտարական հսկող կայ, կամ արհամարհում էր, ուշք չէր

դարձնում և կամ խղճում էր, թող էր տալիս օղալին սիրով իւր փափագին հասնելու:

Բանն այս է, որ Մարջանիկի գեղեցկութեան համբաւն եօթը սարի քամակն է անցկացել և արդէն քսան երկու տարեկան, հասած, կատարած հարսնացու աղջիկ էր ու մինչև օրս ոչ մի փեսացուի կողմից նրանց խնամաքարի վերայ նստող չի եղել:

Այս մի արտակարգ հանգամանք էր: Յաւալի՜ հանդամանք: Տեղական սովորութեամբ՝ աղջկայ ամուսնանալու տարիքը 12—16-ն են, որից ա՛յն կողմն անցնողը պառաւած, անբաղդ է համարուում, և ահա Մարջանիկի նման գեղեցկուհին վաղուց է անբաղդների կարգն անցել:

Ո՛չ, Մարջանիկն անբաղդ չէր, նա ա՛յն երջանիկներիցն էր, որոնք երեսուն տարումն էլ դեռ յոյս ունին լաւ ամուսին ձարել:

Այդպիսիները քաղաք տեղերի օրիորդներն են:

Մի էական պատճառ կար, և այդ ամենքը գիտէին, որ Մարջանիկն այս հասակին է հասել:

Բոլոր գիւղը ճանաչում էր մի ազնիւ և

պատուական երիտասարդի, որ ոչ միայն գիւղի, այլ և գաւառի ամեն մի չափահաս, ամուսնանալու տարիները ոտ դնող երիտասարդի անձամբ զիմում և աղաչում էր, որ հասրաթենց խնամաքարին չնստեն, եթէ չեն ուզում, որ մի օրուայ մէջ երեք ջիւան ջիւան կարմիր արիւնը թափուի:

Վարդանն էր աղաչ-պաղատ անողը:

Ի՛լ չը քննենք՝ մեծախօսի պարծենկոտութիւն էր Վարդանի ոպառնանքը, թէ անկեղծ սրտից դուրս բղխած պարզ խոստովանութիւն. այսքանն ասենք, որ եթէ Վարդանն այսպիսի սպառնալիքներին էլ չըղիմէր, նրա սիրու համար՝ ոչ ոք հասրաթի աղջկանը չէր ուզիլ:

Ո՛ւմ սիրտը չէր շահել Վարդանը, ո՛ւմ արաղներին չէր օգնել, ո՛ր խեղճ ժողովրդի արաղը ձրի չէր քաշել, որ այսօր իրան մերժէին:

Եթէ ոչ այս և ոչ այն ծառայութիւնն արած լինէր ում և իցէ, դարձեալ, գիտելով նրա հինգ տարուան աղջկայ սիրոյն նուիրած գիշերները, ոչ ոք հասրաթի աղջկայ վրայ աչք չէր տնկիլ:

Ամենքեան հաւաստի էին նոյնպէս, որ

Վարդանն իր խօսքին տէր տղայ էր. ինչ զգուշութիւն կուղես՝ նախատեսիր, այս մինն աներկբայելի էր, որ ուրիշ տղայի հետ նշանուած օրը՝ Հասրաթի աղջիկ Մարջանը, իր նշանածն և Թարվէրդով Վարդանը կեանք ու արեւից կը զրկուէին:

Հասրաթն ինքը քաջ գիտէր բոլոր հանգամանքը, բայց միանգամ կողքի էր ընկել և Վարդանին մերժում էր:

Այսինքն՝ ինչ մերժում, երբ էր Վարդանը Հասրաթի մօտ խնամխօս ուղարկել, որ մերժում ստանայ:

— 2է, վճռել էր Վարդանը, ես գիտեմ իմ ու Հասրաթի մէջ եղած տարբերութիւնը, ես նրա դրան մշակը լինելու արժանի չեմ, ուրեմն վերմակիս չափով ոտս պարտական եմ ձգելու, բայց ինչ արած, սրտիս հետ հօ կռուի չեմ կարող բռնուիլ, շատ էլ աշխատում եմ սառչիլ հեռանալ, էս երկրից գլուխ առնել կորչել, բայց որ չի լինում, ես ո՞ր ջուրն ընկնիմ: Հասրաթն ինքն ու իր Ստեղծողը, էնքան դրանք շուրջ կը մնամ, որ կամ ծառաներին հրամայի գնդակախորով անել ինձ, կամ թէ չէ, խղճմտանքն ի-

րեն կը տանջի, քարացած սիրտը ջուր կընկնի ու կը կանչի իրան փեսայ կը շինի:

Այդպէս էլ եղաւ: Հինգ երկար տարիներից յետոյ, երբ այլ ևս Հասրաթը յօյսը կտրեց, որ իւր աղջկանն ուզող չափտի լինի, մի իրիկուն՝ կէս զիշերին մօտ՝ դուռը բաց արեց, դուրս եկաւ փողոց, մօտեցաւ ցախերին ու մթնումը շառաւիղին տուող ստուերի կռնիցը բռնեց, անխօս տուն բերեց:

— Արի, աներես, արի, ձիթի ճրագի մօտ քաշեց Հասրաթը Վարդանին, կերևի, մեր գետինը մտնելու աղջկայ ճակատի գիրը դու էիր, ան, տանք, ոտներն աչքերդ կօխիր, Աստուած ջուրն ձեռով քեզ բաշխի, ոնց որ իմ ու քո սիրտը կը ցանկանայ. ես ուզում էի՝ իր գիրքին ու աստիճանին համեմատ տղայի տալ, բայց Աստուածու հրամանի դէմ հօ գնալ չի լինիլ:

Այս խօսքերով՝ աշնան վերջին՝ Հասրաթը փեսայացրեց Վարդանին ու միւս առաւօտը քահանայ ու իշխաններ հրաւիրեց, նշանն օրհնել տուեց և մի ամսից՝ արաղները քաշելուց յետոյ՝ հարսանիքի օր որոշեց:

դ.

Աքցիղչի միրզա Փարմասոն բէգի հետ մենք վերը մատամբ ծանօթացանք. աւելորդ չի լինիլ սրա վրայ փոքր ինչ երկար կանգ առնել:

Չը կայ մի գիւղ Երևանայ նահանգումը, որ օղեհանութեամբ պարապելուս լինին և չը ճանաչեն Խոջի Փարմասոն բէգին:

Ծակ բերանը նրա անունը լսելիս հայհոյում և ստուերի դէմ թքում է:

— Ոտը կոտրուի, ձիաթափ լինի, գնացած ճանապարհին մնայ, չը վերադառնայ, լսուում է մեծ ու պտկի, էգ ու որձի բերանից Փարմասոն բէգի հասցէին:

Փարմասոն բէգին լաւ ճանաչելու և նրա գործերի հետ մանրամասնօրէն ծանօթանալու համար՝ երևակայելու է մի զեղեցկատեսիլ, միջահասակ՝ դէպի բարձրը լնուած, թուխ թուխ աչքերով, մրայօն կեռ ու կամար թանձր յօն-

քերով, սև սև ու սուր ընչացքներով, փոքրիկ մօրուքով, կարմրերես և ժպտադէմ երիտասարդ, որի դէմքին անծանօթ Քիլիմանյար կը կարդայ հեղահամբոյր ու քաղցր բնաւորութիւն, զթոտ ու կարեկից սիրտ, ռամկի և աղքատի կարիքին հասնող հոգի. մի խօսքով՝ մարմնացեալ առաքինութիւն:

Տարաբաղդաբար՝ բնութիւնն երբեմն մեծ սխալներ է գործում և նրա արած ամենախոշոր սխալներից մինը միրզա Փարմասոն բէգ անուն կրող աքցիղչին է:

Բաւական է նրա գործերի աննշան տոկոսը թուենք և մենք լիովին կը համոզուինք, որ մարմնացեալ առաքինութեան զիմակով սքօղուած է մարմնացեալ չարութիւնը:

Ասացինք՝ գիւղ չը կար, որ չը ճանաչէր Փարմասոնին, ճշմարիտ է և այն, որ չը կար մի օղեհան, որ այլուած ու խորովուած չը լինէր լիշեալ մարդից. ամէն տեղ նա իւր զոհերն ունէր:

Փարմասոն բէգն իւր կողմից՝ յականէ յանուանէ ճանաչում էր նահանգի բոլոր օղեհաններին:

Մի և նոյն էր նրա համար, արդար ճանապարհով են այս ու այն ոք սեպհական աջու խաղողը ճմլել, օղի քաշում, գործարանատէր են, թէ մաքսանենգ են. Փարմասոն բէզն անխտիր չար հոգեհանի նման՝ ընկնում էր նրանց տուն ու տեղը, քրքրում էր ամէն ծակ ու ծուկ, գոմ, մարագ, գլխատուն, ծերունիների անկողիններից բռնած՝ մինչև հարսնացու պարկեշտ օրիորդների ու երկ-օրուան նորահարսների հագուստեղէնը ցրուում, իրարոցով տալիս, իւր ձեռքովն անպատկառօրէն դէս ու դէն շպրտում, խուզարկում, որպէս զի կարողանայ ուր և ինչ սեպհական գործածութեան համար օրէնքով թոյլատրուածից մի բաժակաչափ անգամ օղի գտնել, տանուտէր ու վիաներ կանչել, արձանագրութիւն անել և խեղճ օղեհանին տուգանքի ենթարկել:

Ի՞նչ թէ օղեհան. — գիւղական խանութպանները Փարմասոնի ձեռքից օձիք էին պատառում:

Ահա մտնում է միրզա Փարմասոնը խանութ և յանդգնօրէն անցնում վաճառասեղանի միւս երեսը և մի կապոց քանդակաւ փակուած ծխախոտ վերցնում:

Բաւական է, եթէ նրա ձեռքը ծխախոտի կապոցին առաւ և նա այնպիսի յաջող ճարպիկութեամբ կը պոկէր սոսնձած կապոցը, որ տառնաւոր աչքեր չէին նկատիլ:

— Այս ի՞նչ է, անպիտան աւագակ, դու ծխախոտի բաց արած կապոցնէ՞ր ես պահում, դու հատով պարտքն է՞ր վաճառում:

Ի՞նչ անես, ինքդ հաստատ գիտես, որ և ոչ մի բաց կապոց չես ունեցել խանութումդ, բայց եթէ քեզ վկայ կանչէր, դու քո դէմ առանց խղճահարութեան վկայութիւն կրտայիր, թէ տեսածդ ծխախոտի կապն արդարև բաց էր:

Ուրեմն դարձեալ արձանագրութիւն:

Սոյնանման արձանագրութիւններից զրգուած՝ մի գիւղական խանութպան վճռում է խանութում ոչ խմիչք և ոչ ծխախոտ վաճառել:

Ահա մի օր ձին հեծած՝ գալիս է Փարմասոն բէզը և ուղղակի իջնում լիշեալ զգոյշ պարոնի խանութի դրանը:

Խանութպանն իրանից ապահով, ճակատը բաց, շտապով դուրս է վազում, ձին բռնում, և յարգանօք ներս հրաւիրում:

Փարմասոնը պատուիրում է մարդ ուղար-

կել տանուտէրի ետեւից և ինքն ուտել է խրնդ-
րում:

Գլուղական խանութներն առ հասարակ
իւրեանց տներին կից են լինում:

Հիւրասէր հայը շտապում է տուն, բերում
ինչ Աստուած տուել է և դնում միրգա Փար-
մաստնի առաջ:

— Գու ի՞նչ գլուղացի ես, որ տանդ մի շիշ
օղի չունիս քո համար դորձածելու, կամ հիւրե-
րիդ պատուելու: Այս խօսքերով դիմում է Փար-
մաստնը դէպի գեղջուկ և սլարգամիտ խանութ-
պանը:

— Ընչի՞ չունիմ, աղայ ջան, ասում է խա-
նութպանը և վազում մի շիշ օղի բերում, իւր
հիւրին հրամցնում:

Մինչ այս, մինչ այն, գալիս է տանուտէրը
մի երկու իշխաններով:

— Գուք վկայ եղէք, մարդիկ, սառնասրը-
տութեամբ հացը ծամելով՝ դառնում է Փարմա-
ստնը դէպի ներս մտնողները, ես սրա խանու-
թումն օղի դտայ:

Սառը սրտով, խանութպանի ճշմարիտ
փաստերն արհամարհելով՝ հանում է Փարմաստնը

գզրոցից թուղթ ու գրիչ և արձանագրութիւն
կազմում:

Ներկայ եղողները շատ էլ հաստատ հաւա-
տում էին խանութպանի խօսքերին, բայց եր-
կիւղ կրելով չարագործի վրիժառութիւնից, խրդ-
ճերի և մարմնի աչքերը փակում են իրանց հա-
րեանի լաց ու կոծի զէմ և արձանագրութեանը
վկայ գրուում:

Այնուհետև այսպիսի հաղարաւոր փորձան-
քի ենթարկուածներին պրծնելիք չկայ, մինչև
որ ձին հեծնեն, չիւթան Երեւան և մի քանի
երեկոյ մութը կոխելուց յետոյ՝ Փարմաստն բէգի
դրանը վիզը թեքած՝ ԴՆՆ չդառնան:

Անխիղճ անաստուածը մի տեսակ հաճոյք
էր զգում, երբ ձմեռուան երեկոներին՝ իւրեանց
փողոցումն երկու երեք զիշեր՝ տեսնում էր շնորդ
տալուս՝ իւր ցանցերի մէջ խճճուած ապաբաղդին:

Փարմաստն բէգի սիրտը չէր հանգստա-
նում, եթէ իրանից ոչ պակաս անօրէն ծառան
մի քանի երեկոյ չէր հայհոյում, չէր ծեծում և
դուրս չէր վռնտում իւր դուռն եկած գեղջուկին:

— Ի՞նչ ես քօշի նման ներս խցկուում,
բռունցքով կրծքին հրելով արտաքսում էր Փար-

մասոն բէզի ծառան եկաւորին, հարիւր անգամ քո դդում գլխումդ հալացնում են, թէ աղէն ժամանակ չունի քեզ պէս աներես շան վնդըստոցը լսելու. երես չունիս, գնա կորի էլի:

Հատ լաւ գիտէր խորամանկ ծառան, որ այդ թշուառ արտաքուստ մանէթն այսօր չէ, վաղը մտնելու է իւր դրպանը, կորստական չի, աւելի լաւ է, նեղը լծի, որ մէկի փոխարէն՝ երկու մանէթ շահուի:

—Քեզ մատաղ, Ասլան ջան, օրերով մղկըտում էին Փարմասոնի խոհանոցումը, բազումը, կամ շատ անգամ ջրի ու բաղաբի ճանապարհին օղեհանները, չորս օր է՝ էս քաղաք տեղը հոգեհան մաշուեցայ, ինքս էլ տանջուելով ձեռաց գնացի, անլեզու անասուն ձիս էլ. գրպանիս կոպէկը կտրուեց խոտ ու դարման առնելով. բայց չորս աչքով էլ որ անքուն հսկեմ, դարձեալ չեմ կարող գոմանոցի տիրոջ յափշտակութիւնից ազատել ձիուս կերը. կրկնակի գնով մի ձեռնաչափ խոտ է տալիս ու մի ճանգ դարման. դրնում եմ ձիուս առաջը, դուրս եմ գալիս. հինգ վալրկեանից մտնում եմ և մսուրքը միանգամայն դատարկ է լինում: Ինքս չեմ հասկանում,

թէ անիրաւ դոմի տէրը իրտեղից մտաւ և ինչպէս զողացաւ, դուրս տարաւ: Եթէ էս քաղաքումը մի երկու օր էլ աւել մնամ, հերիք չի, որ տունս պահող ու երեխաներիս հացը մէջքով վատտակող աշխատաւոր ձիուցս կը զրկուեմ, ինքս էլ գոմանոցի լուերի ձեռքից ու դարշահոտութիւնից կը հիւանդանամ և անտուն, անտեղ կը մեռնեմ:

—Այուրեւս դու էլ սատկի, քո տունդ էլ զլխիդ փչի, քեզ տուն թողնողը չեմ, մեր աղէն վրադ պրփռէ՛ր է գրել, էգուց էլ օր պրփռէ հէրդ կանիծի, հիմի տուն ես գալիս, ինչ անես:

—Ասլան ջան, դու էլ գիտես, որ աղի դրած պրփռէ՛րի հարիւրից մինը պրփռէ դուռը չի հասնում, սիրտը շահում ենք, ճղում, հողիներս ազատում. հիմի էլ փալաս փուլուս գրաւեմ դրել, մի քանի մանէթ պարտք արել, բերել եմ գերիս ազատելու, դրա համար եմ քեզ էլ, ուրիշներին էլ զլխացաւանք տալիս:

—Դու որ մեր աղալի տեղը գիտես, հապա աղան ծառայ չի ունենալ, բո՛ւ իշի մշակ ենք, պրփռէ (պարսիկ) կոռուոր ենք, շան պէս տարին բոլոր անփող ծառայում ենք, մեր շահ-

մունքն էլ ձեզանից պիտի լինի, իւր ծառայական իրաւունքների պատճառաբանութիւններն է յառաջ բերում Ասլանը:

— Դէ, մենք խոտակեր հօ չենք, Ասլան ջան, մարդ ենք, հացակեր ենք, մեր պարտքը ճանաչում ենք, բերած փողիս գլխիցն առաջ քո բաժին մանէթն եմ ջոկել, աղլխիս ծէրին կապել:

Եւ խեղճ օղեհանը ձեռքը գրպանն է տանում, թաշկինակի կապն է սկսում արձակել:

— Մանէթ ունիս, տար մաճնի տուր, կնոջդ գլուխը լուա, կշտամբում է Ասլանն աղերսարկուին և հեռանում:

Գլխիդ մատնդ, Ասլան ջան, հայր ու մայր կունենաս, աղիդ սիրեկան կունենաս, ինձ նրանց գլխովը պտիտ տուր, իմ համար դու ուտես իմ փողն աւելի ուրախութիւն է, քան թէ քո տընքանդ ու աշխարհաւեր աղէն, բաց փախում եմ որ չըլինի թէ նա էլ քեզ պէս բերած կաշառքս քիչ համարի, գլխովս կպցնի, յետոյ գործը որ դատաստան ընկնի, տուն ու տեղս էլ ծախեմ, տակիցը չեմ կարող դուրս պրծնիլ:

— Քո ի՛նչ գործն է, դու իմ սիրտս շահի, ես մեր աղալին բաւականացնելու ճանապարհը քեզ սովորցնեմ:

Գլուղացին մէկի փոխարէն՝ երկու, երեքմն երեք չորս մանէթներ Ասլանին է օրհնելով նուիրում:

— Իրիկունը որ խալխը կը քաշուին, դու կը գաս մեր դուռն երեք անգամ կը ծեծես. ես քեզ կը տանեմ խանումի սենեակը, ներս կը մտնես ու դրան առաջից չոքէ չոք կը զնաս խանումի ոտքը. կասես՝ էդ քո «սփ» (մատաղ) բալուկի՝ սիրուն աղալի աչքը վրէս քաղցրացրու: Ահա էս մէկ հատ ապրշումի աղլուխն էլ քո երեխալի գլուխը փաթաթելու համար ընծայ եմ բերել:

— Ապրշումի աղլուխ էլ պիտի առնեմ, Ասլան ջան:

— Դու իմ առածը լսի, բերած կաշառքդ աղլխի մէջ կոլովի ու խանումի ձեռք տուր: Նա բաց չի անիլ, բաց կը հասկանայ, թէ միջի փողն ի՛նչքան է: Ախար քո գործդ ինձ էլ, քեզ էլ, մեր աղալին ու խանումին էլ յալտնի է, լիսուն մանէթից պակաս գլուխ գալու չէ. եթէ էդքանը բերել ես, առաջուց ինձ իմաց տուր, ես խանումին կը հասկացնեմ, նա համով—հարկւորով աղլուխը գրպանը կը զնի, քեզ դուրս կ'ուղարկի, դրսէն սպասել կը տայ, ու կէս ժամից

աղալի երեսը կը տանի, թուղթդ իր ձեռքովը կ'առնի, կը ճղի:

Այսպիսի տեսարաններ անդադար կրկնուում էին Փարմասոն բէգի ընտանեկան շրջանում:

Ասլանի ենթադրութիւնն ուղիղ էր, Փարմասոնի կազմած արձանագրութիւնից՝ օղեհանները գուշակում էին, թէ քանի մանէթ կ'արժեւոր իրանց թղթերի պատառումը:

Այս ևս քաջ յայտնի էր ամենքին, որ Ասլանն է այն մոգական բանալին, որով փակուած դուռը բացուելու է՝ երկրորդ և ամենաէական մուտքին արժանալու:

Այսպէս էր միրգա Փարմասոն բէգի բնութիւնը, մինչև իւր ղեղեցկուհի դեռատի կինը խուճիկ-մունջիկ անելով տուն չը մտնէր, կարմիր ու փափկիկ երեսը նրա շրթունքին չը մօտեցնէր, մի երկու րոպէ ևս աղաւնաբանութիւն չանէր ու յետոյ փողը ցոյց տար, ոչինչ գործ գլուխ չէր դալ:

Տիկնոջ կաթոգին համբոյրի առաջին ապառաթի պէս կտրծր Փարմասոնը փշրուում, մանր աւազ էր դառնում:

Ե.

Հինգ տարին աւելի հեշտ անց կացաւ Վարդանի համար, քան նշանածութեան մի ամիսը. հինգ տարի զոնէ մտքով էր միայն իւր սիրածի հետ, իսկ անձամբ, թէև նոյն զիւղումը շատ անգամ մի պատով միայն բաժանուած, սակայն չունենալով ոչ մի դրական իրաւունք, բաւականանում էր սրտի մէջ նրա անունը յեղեղելով:

Բայց այս վերջին մի ամիսը լիազօր իրաւունքի տէր, օրինաւոր նշանած, չէր համարձակուում իւր ապագայ ամուսնու շուաքն ևս տեսնել:

Տեղական աւանդական սովորութիւնը և Հասրաթի խիստ պատուէրը մի տան մէջ երկու սիրեկաններին հեռացրել էին իրարից՝ ինչպէս եօթը սարի ետևն ընկած անձանօթներ:

Հէնց որ դուռը ծանր ու դանդաղ ձուռում

էր, Մարջանիկը մկան ծակը հազար թումանով
էր առնում ու մէջը խցկուում:

Երկուսի դժբաղդութիւնից՝ Վարդանին վի-
ճակուեց այս վերջին ամիսը շաբաթի մեծ մասն
իւր աներացուի բակումը լինել:

Զարունակ երեք շաբաթ Վարդանն օգնում
էր աներոջ օղեհանութեանը:

Արաղի գործարանը բաց արած օրից՝ մի
քանի աքցիկէիք այցելել էին, ըստ սովորակա-
նին, հասրաթիւն և գնացել: Բոլոր օրինական
իրաւունքներն ստացուած էին, վճարքը տուած,
քաշուած օղին իւր ժամանակին տեղաւորած:

Հետեւաբար, ոչ մի կասկած, ոչ մի երկիւղ
ոչինչ կողմից չէր սպասուում, ամենքին յայտնի
էր հասրաթի շիտակութիւնը, մանաւանդ՝ որ
ղիպուածով ներկայ էր եղել աքցիկէիների մե-
ծաւորն ինքը՝ Լաւաղէն:

Այսպէս էր կոչում բոլոր դաւառն աքցիկ-
չիներից ամենաազնիւ և անշահասէր մարդին:
Ժողովուրդն էր ստեղծել իւր սիրելու համար—
Լաւաղայ կոչումը. մենք էլ Լաւաղայ ճանաչենք:

Իսկ ուր Լաւաղէն է գործը կարգի գրել,
ինչ բան ունին այդ տեղերը ծածկագործ ծա-

ռայողները, մանաւանդ՝ միրզա Ֆարմասոնի պէս
մարդիկը:

Աքցիկչիների յաճախակի այցելութեան
պատճառը բացատրելն անհրաժեշտ է:

Դիցուք՝ մի գործարանատէր մտաղիւր է մի
ամիս օղեհանութիւն շարունակել: Նա թէպէտ
մի ամսի իրաւունք ստանում է, բայց ամբողջ
ամսի վճարք լիովին չէ հատուցանում:

Երբեմն գործը պահանջում է մի քանի օր
պարբերաբար ընդհատումներ անել:

Ազատ օրերի համար աքցիկ վճարելու չէ:
Աքցիկչիների պարտականութիւնն է՝ կանխապէս
գիտելով գործի ընդհատման ժամանակը, տե-
ղումը գտնուել և կաթսաները կնքել, որպէս և
բանալու ժամանակին դալ և բաց անել:

Այլապէս՝ աքցիկչիների ուշանալը գեղձում-
ների տեղիք կարող է տալ: Երկու աւելորդ ժամ
օղեհանութիւնն առանց աքցիկ վճարելու շա-
րունակելը զգալի օգուտ է գործարանատիրոջը:

Առաջին օրն էր, որ Լաւաղէն իւր ձեռ-
քով քակել էր հասրաթի կաթսաների կնիքն
ու գնացել, որ նոյն գիշերը միրզա Ֆարմասոնը
տուն ընկաւ:

Ամէնքի աչքերը զարմացից յետ բացուեցին, երբ Փարմասոնը նենգաւոր ժպիտով մի անկիւն կանչեց Հասրաթին:

— Խէր լինի, աղայ, վստահացաւ Հարցնել Հասրաթը:

— Խէր է, պ. Հասրաթ, դու քո կեանքումդ աքցիկով թագաւորի զանձարանին մեծ օգուտ ես տուել, փոխարէնը ես ուզում եմ իմ կողմից քեզ լաւութիւն անել:

— Ի՞նչ:

— Դու այս անգամ երեք շաբաթ գործարան բանալու իրաւունք ես ստացել, ես արդէն նախատեսել եմ ամեն զժուարութիւն և արդելք, ինձ վրայ եմ առել այսուհետեւ գործարանդ կրնաքելու և բանալու իրաւունքը, Հասկացա՞ր...

— Չատ էլ լաւ ես արել, աղայ, ժամանակին Համեցէք, քո պաշտօնդ կատարի:

— Ասելիքդ էդքանն է:

— Ես ոչ մի ասելիք չունիմ, ձեր ժամանակը գիտէք, եկէք, օրէնքի Համաձայն գործերդ տեսէք:

— Փորդ կը ծակի՞, որ ամեն անգամին մի քանի ժամով ուշ գամ:

— Կուգե՛ս՝ ուշ արի, կուգե՛ս՝ շուտ, իմ ժամանակին կրակը կը հանգցնեմ, գործը կը դադարացնեմ:

— Իրա՛ւ ես ասում:

— Ես խնդրում եմ, աղայ, էդպէս խօսակցութիւններ ինձ հետ չանես, աքցիկներով բոլորին յայտնի է իմ բնութիւնը, ես իմ Հացի մէջ ոչ մինչև էսօր Հարամ խառնել եմ, ոչ էլ կը խառնեմ: Հրամանքդ մի քանի անգամ ականջս քաշել ես, բայց ես միշտ քեզ չեմ լսել, հիմի էլ խօսքդ դուր խարջած կը լինիս, քո ասած մարդը ես չեմ, ուրիշ տեղ պտուտիր:

— Էդ Հալալութիւնը նորափեսայիցդ ես սովորել, որ իր ժանգոտած պղծներովը թագաւորի զանձարանին ահագին վնասներ է տալիս. քանի՞ քանի անգամ ուզեցել եմ բռնել, բայց լսեղճ եմ եկել, աչքս փակել, հեռացել եմ:

— Մոտ ես ասում, յանկարծ արաղի օջաղի տակից մի երկար թերէրեց (կիսալրիւ փայտ) դուրս քաշեց ու յառաջ եկաւ Վարդանը, դու ինքդ չես աչքերդ փակել, արաղի տէրերն են աչքդ կաշառքի հետ մոխիր լցրել, փակիլ տուել:

— Ինչո՞ւ սուտ չի, որ դու թագուհի արագ ես քաշում:

— Այո՛, քաշել եմ ու էլի կը քաշեմ, խեղճ չքաւոր աղքատների արագը կը քաշեմ, իրանց կը տամ, որ նրանց ընտանիքի ցամաք հացը քեզ պէս անաստուած անխղճմտանքները չըխլեն, չուտեն: Ահա երևում է քո խտալութիւնը, քաղցի բասարի մէջ մի հալալ արագ քաշող կայ, եկել ես, սրան էլ ես ուզում ճանապարհից հանել:

(Վարդանը մատնացոյց արեց իւր աներոջը:)

— Էդ քո խելքի բանը չի, քեզ հետ ոչ ոք չի խօսում, հեռացի քաշուի՝ եթէ չես ուզում հարսնացուիդ երեսից օր առաջ զրկուել:

— Ո՞ւմ ես վախացնում, մի ոտքն յառաջ դրեց ու թերէրեցը բարձրացրեց, յարձակուեց և կամեցաւ իջեցնել Փարմասոնի գլխին Վարդանը:

Փարմասոնը մի քանի քայլ յետ յետ կասեցաւ, իսկ Հասրաթը իսկեց Վարդանի ձեռքից փախորդ և բարկացաւ ու հրամայեց հեռանալ:

Վարդանը ծործորակը քերեց և քաշուեց մի կողմը:

— Քո խաթրն է, պ. Հասրաթ, թէ չէ

խկոյն զազախները վրայ կանեմ, կը բռնեմ, բերդը կը տանեմ:

Սուտ չէր ասում Փարմասոն բէգը, երկու զազախ Փարմասոն բէգի ձին բռնած՝ դուրսն սպասում էին:

Աքցիկչիք իրաւունք ունէին՝ կարիք ունեցած միջոցին՝ գաւառական վարչութիւնից օգնութիւն խնդրելու:

— Զնորհակալ եմ, միրզա աղայ, զիտեմ, որ ինձ պատուում ես:

— Ուրեմն ի՞նչ ես ասում, մեր պայմանը զլուխ է գալիս, թէ ոչ:

— Պայմանի մասին թողութիւն կանես, միրզա աղայ, բայց որ նեղութիւն ես քաշել, շնորհք ես բերել, էս քո ոտնավարձը:

Հասրաթն երկու մանէթ դրեց Փարմասոնի բուռը:

— Ուրեմն մնաս բարեւ, իր ժամանակին ես էստեղ կը գտնուիմ զործարանդ փակելու:

— Դնաս բարեւ, աղայ,

— Դու էլ մնաս բարեւ, Վարդան, գնա՛ քո աներոջ գլխովը պտտուիր. թէ չէ...

— Լաւն էն է՝ ինքզ իմ աներոջ ոտները

ջուր անես, խմես, թէ չէ ցախի տեղակ' արաղի տակին կը ճռճութայիր, պատասխանեց Հեռուից Վարդանը:

— Լաւ, մի բարի օր ես քո աչքին կերեամ, սպառնաց Փարմասոն բէգն և դուրս գնաց:

— Տեղն ու տեղը փորձանք է որդամեւը, առաց ետեւից Հասրաթը, օրհնեալ է Աստուած, որ անփորձ պրծանք:



2.

Վերջապէս եկաւ, Հասաւ բաղձալի օրը:

Գափ ու զուռնի ձայնն աշխարհք է բլունել, Գառնիբասարի զիւղերի կէտը Հասրաթի տանը հրաւիրուած են:

Արարատեան աշխարհում՝ ընդհանրացած սովորութեան հակառակ՝ հարսանիքի ծախքն իւր վերայ է առել Հասրաթն ինքը:

Երեք օր, երեք զիշեր է տեւում մեր աշխարհքի հարսանիքը, մի քանի անգամ ճաշ-կերույթներ և երեկոյթներ են լինում, բայց ամենաճոխ պատրաստութիւնը, ամենահանդիսաւոր խրախութիւնը պսակաճաշն է, այն նշանաւոր օրը, երբ փեսան ու հարսը սուրբ սեղանի առաջին թաղաւոր և թաղուհի անուն կրած, նաբօտը վզերին, իսաչը փեսայի գլակաճալումը թաղի փոխարէն բազմացրած, լաղթական հան-

ղիտով շրջապատուած, ոչ միայն միւս ժամանակների համաձայն աղապներով ու մակարներով ալ հասարակութեան մէջ ամենից յարգուած անձինքներով և բոլոր հրաւիրուածներով, տուն են վերադառնում եկեղեցուց:

Հասրաթենց գլխատանը, արևելեան պատի տակին, գորգերի ու մահլիճների վրայ, թիկունքները կապերտներով զարդարուած, պատին յեճած՝ կանգնած են թաղաւոր Վարդանն ու թագուհի Մարջանիկն իրանց խաչեղբօր ու փեսեղբօր հետ:

Թաղաւորն ու խաչեղբայրը վառած մեղրամօմեր ունին ձեռքներին բռնած, իսկ փեսեղբայրը թուրը կախ՝ մի ափսէով միւրգ և մի դաւ գինի ունի բռնած:

Քահանան նոր «Թաղաւոր գոլով» շարականը երգել, վերջացրել է և բազմել է թաղաւորի աջ կողմը, խաչեղբօր կողքին, կարգով նստոտած են ըստ արժանաւորութեան գաւառի իշխաններն ու պատուելիքը:

Միմիայն գլխատանը չեն բազմած հրաւիրուածները, հասրաթի բոլոր յարկերի տակ, մինչև անգամ բակումը՝ գլխէ գլուխ սեղան է փրուած, ոտ փոխելու տեղ չկայ:

Ճաշի ամենահանդիսաւոր ժամն է. մի քանի կենացներ վերջացրել են:

Փլաւը քաշեցին, սեղանի կառավարիչը հրամայեց տնտեսապետին զինիները փոխել, նոր կարաս բաց անել: Վայելելու են ամենաթանկագին կենացը՝ թաղաւորի ու թագուհու կենացը, որից յետոյ՝ թաղաւորն իւր խաչեղբօր ու փեսեղբօր հետ մնալու է կանգնած մինչև ճաշի վերջանալը, իսկ թագուհուն դապի ու զուռնայով տանելու են կանանց սենեակը, ուր նոյն բարեմաղթութիւնները շարունակելու են պատուաւոր տիկնայքը:

Յինու բոլոր գաւերը ժողովեցին, պոկուեց ամենաղուխ զինու կարասի ծեփը, նոր զինիքը շարուեցին սեղանների վրայ և կառավարիչն առաջարկեց նախ՝ քահանային և ապա հասրաթին՝ օրհնել այս հանդիսի գլխաւոր պատճառներին:

Տէրտէրից յետոյ՝ հաղիւ բերանը բաց էր արել հասրաթը. — որդիք, հայր Աբրահամի օրհնութիւնը ձեր...

Հասրաթի խօսքը կիսատ մնաց, դրուկից հեւալով տուն ընկաւ սեղանապետը և շնչարգել դէպի տանուտէրն առաջ գալով՝ արտասանեց.

— Միրզա Ֆարմաս . . .

Ամէնքի երեսի գոյնը մեռելի փոխուեց, բոլորեքեան իրարոցով դիպան, երբ անունը դեռ չլերջացրած՝ չորս զազախի ուղեկցութեամբ ներս խուժեց գոռգոռալով աքցիկչի միրզա Ֆարմասոն բէգը և կատաղի աչքերը տանուտէրին ուղղած՝ ճչաց վրան:

— Մըն էգուց նշանդ վզիցդ պոկել կը տամ, տանուտէր, գողի ընկեր ես, գողի տանը *էֆէ ես նստել. ընչի՞ չէ. թագաւորի գանձարանը կը կողպտի ու նրանով հարսանիք կանի, աղջիկ մարդի կը տալ, իր նման մի աւագակի էլ գտել է, մէկը միւսին արժեն. ребята, плетью разогнать весь этот сбродъ! (տղաւք մտրակով ցրուեցէք այս խուժանը):

Այսքանը բաւական էր կարգապահ ճշդակատար զազախներին աջ ու ձախ, մեծ ու փոքր չհարցնել, մտրակը կապոյտ լեղակի էր փոխում կպած տեղը, աչք, երես, քիթ ու սրունդ չէին հարցնում զազախները, անխտիր ու անխնայ հարուածները շուսլում էին:

Սեղան, կերակուր, գոլորշին երեսին խաղացող փլաւ ոտնատակ տրորուեցին, փախչող

փախչողի էր, դրան առաջին ճխտոց ու խեղդոց էր, հարալ հրոցը, ճիչ ու ծուռոցն ամեն ձայն խլացրել էր, երեխայոց և կանանց ծղրտոցը սիրտ էր մղկտացնում:

Բարեբաղդօրէն՝ պսակաճաշն էր, երեխաների մեծամասնութիւնը հարսանիքատիրոջ կտերը խաղի էին բռնուած, մանրերն ու ծծկերներն էլ կանանց սենեակումն էին, ապա թէ ոչ, առանց ոտնատակի ճխլուելու չէր անցկենալ:

— Այն գլխիս, էս սնմ են սեւապսակ ա՛նում, մի ամպանման գոռոց դղրդացրեց տունը. մի քանի կաթիլ արիւնդ էլ չուզեցի, մարդակեր անօրէն, էս էլ չեղաւ անցեալ անգամը, ճիչ արձակեց Վարդանն ու սուրը խլեց փեսեղբօրից, դուրս քաշեց պատենից և բազմութիւնը ճղելով՝ յարձակումն գործեց տան միջնակալութեամբ կանգնած միրզա Ֆարմասոնի վրայ:

Առիւծը մուկը դառաւ, Ֆարմասոնը կռացաւ, կուչ էկաւ ամբօխի մէջ և զազախներին հրամայեց իրան պաշտպանել:

Հազախները շուրջ բոլորեցին կկգած Ֆարմասոնին և սրերը հանեցին:

— Աման, ի սէր Աստուծոյ, արեանպարտ

մի դառնար, տունս արիւնով մի լցնիլ, Վարդան ջան, աղաղակեց Հասրաթն ու թուրը խլեց, շարտեց դէպի հարսի ոտքերը:

— Տղայք, բռնեցէք էդ ծերունուն ու այդ երիտասարդին, հրամայեց ռուսներէն կծկուած տեղից Ֆարմատոնը զաղախներին:

Ապա ձայն տուեց տանուտէրին.

— Քեզանից պահանջում եմ իսկոյն բռնել Հասրաթին ու Վարդանին. օրէնքի անունով՝ դրանք իմ կալանաւորներն են:

Ղազախները սրերով յարձակուեցին երկու մեղադրուածներին վրայ:

— Հրամայի՛ սուրերը պահեն, Ֆարմատոն բէգ, զոչեց Հասրաթը, ես և իմ փեսէն մեր կամքով անձնատուր ենք լինում:

Հասրաթը ձեռքերը մէջքին դրեց, նոյնպէս հրամայեց անել և կոտրուած ու նուաստացած Վարդանին և ապա դարձաւ տանուտէրին:

— Պարան բերել տուր, մեր կռները կապիր, մենք օրէնքին հակառակ չենք, ի հարկէ, վերջը կիմանանք մեր յանցանքը:

— Աղայ, մօտեցաւ տանուտէրը Ֆարմատոնին, սրանց կռները կապելու կարիք չկայ, եթէ

սրանք փախչեն, կամ մի անկարգութիւն անեն, ես և այս բազմութիւնը պատասխանատու ենք. ինքդ էլ մի վախենալ, վեր կաց քո պաշտօնդ կատարի, *ԴԵՐԵՆԻՆ* ունիս՝ զրի, թէ կուգես՝ հարիւր մարդ քեզ վկայ կը տամ:

— Հարիւրը պէտք չեն, չորս պատուելի իշխան պահիր, մնացածին հրամայի՛ զուրս դնան. ես Հասրաթի տունը խուզարկելու եմ, ինձ լուր է հասել, որ սա աքցիկչուց թագադրած օղի ունի:

— Հն, հն, հն, կիչաց Հասրաթը, երբ լսեց իւր վրայ բարդած մեղադրանքը, մեր մեղքը հէնց այդքանն է, հէր օրհնած, էլ ուր էիր իմ հարսանիքս մահենիքի փոխում. տուն կը գալիր, կը նստէիր, հետներս ուրախութիւն կանէիր, վերջը ես քեզ կը տանէի զողացածս արդի տկերի գլխին կը կանգնացնէի: Տանուտէր, տանուտէր, զոչեց Հասրաթը, ինչորում եմ կարգադրես, որ հիւրերից ոչ մէկը չըրցուեն, թող միրգա Ֆարմատոն բէգը տունս պտուտի, թաքցրած արաղներս կնքի, *ԴԵՐԵՆԻՆ* զրի ու յետոյ իրան ու իւր զաղախներին նստացնենք, աղջկանս պսակաճաշը նորից նոր նորոգենք ու մի քո հաւան կացած ուրախութիւն անենք:

— Համաձայն ես, աղայ, յառաջ զնաց Հաս-
րաթը և Հարց տուեց Փարմասոնին:

Փարմասոնը լուռ էր, նա մի քանի վայր-
կեան՝ մոլորուած եղան նման՝ աչքերն ածուծ էր:

— Համաձայնիր, միրզա-աղայ, խնդրում
ենք, յառաջ եկաւ տանուտէրը, էս հանդիսաւոր
օրուան սիրուն՝ Համաձայնիր:

— Այո, Աստուած օրհնեցէ՛ք եղ, աղայ,
լաւ է հրամանք անում մեր տանուտէրը, Հա-
մաձայնիր. հա՛, աղայ ջան, Համաձայն ես:

— Ասենք՝ մի ըստէ Համաձայնեմ, յետոյ:

— Յետոյ՝ ա՛յ ինչ. էյ, զուռնաչիք, զօջեց
յանկարծ Հասրաթը անկիւնումը կուչ եկած նու-
ղածուններին, շո՛ւտ, շո՛ւտ, մի չե՛փե՛ ածեցէք, ես ու
կիսնս մեր դաւակի բաղդաւորութեան ժամանակ
պիտի օր ծերութեան պար զանք: Ի՛յ, կառա-
վարիչ, ի՛նչ ես մոլորուել մնացել, ո՞ր օրի Հա-
մար եմ քեզ ընտրել, որ սիրի՞սե՛լ, պատի ծեփ
ես դառել, շո՛ւտ, գնա կանանց միջից պառաւիս
քաշ տո՛ւր, թող զայ իր փեսին ու աղջկանն
օրհնի ու հետո պար զայ:

Դափ ու զուռնէն նորից ներս ժողովեց սար-
սափի եկած հարսանիքաւորներին:

— Տեղերդ, տեղերդ, Աստուած սիրողն իւր
տեղը զտնի, ձայն տուեց Հասրաթը, ոչինչ չը-
կայ, սխալմունք է պատահել, աչքածակութիւն
եմ արել, մի երկու տիկ արագ եմ թազցրել,
սւներես չո-չո-չե՛րը (լրտես) զնացել են միրզա
աղին անհանգիստ արել, էնպէս չի, միրզա աղայ,
ուղիղն ասա, հէնց քեզ մատնող:

— Էղպէս է, կմկմաց առանց տեղիցը կանդ-
նելու՝ վախվախելով Փարմասոնը:

— Դէ՛ որ էղպէս է, Համեցէք վերի կողմը՝
թաղաւորի կողքը, մի լաւ քէֆ անենք, դա-
ղախներիդ էլ որտեղ կուգես՝ նստացրու:

— Ա՛յ տղայ, փեսայ Վարդան, շարունակեց
Հասրաթը, ի՛նչ ես քիթդ կէս դաղ կախել, խէթ
աչքով ուզում ես մարդի ողջ ողջ կուլ տալ,
կնիկ արմատ ես, ինչ է, որ աչքերիցդ արտա-
սուքը ջրի պէս թափում ես, էղպէս պէտք է
իմ աղջկանը տղամարդութիւն անես. հրամայում
եմ քեզ, յետ գնա տեղդ, Խա՛րաբ (գա՛հ) բարձ-
րացիր, քո թաղուհու կողքին կանգնիր, քո
թաղուհու սիրտը պնդացրու, չիս տեսնում՝ քօղի
տակին կիսամեռ եղաւ:

Վարդանը, որ սեւացել, սրտի հերսիցն ա-

ծուխ էր կտրուել, կարծես թէ չըլտեց աներոջ խօսքերը. այս վայրկենին նա մարդի չէր նման, նա հովուի գայլիեղզ գամփռ շուն էր, որ յարձակումն է դործում իւր հսկողութեանը յանձնարարած հօտին մօտեցող գողին, կամ օտարականին, և հէնց այն է՝ մաղ մնաց՝ պատառ պատառ պիտի ծուտէ, զգաստ և փորձառու մարդը փայտը ձեռքից ձգում և պղզում է:

Որքան և կատաղի շուն լինի, նստած տեղը մարդի վրայ չի յարձակուիլ, այլ հեռուումը կը կանգնի և ատամները կը ճտացնելով կսկսի մուռալ: Բայց վնչ է, եթէ մարդը լիմարանայ և կամենայ մի տեսակ փախչելու հնարք անել, կամ տեղիցը կանգնի: Անողոք այդ գաղանը ծուխի ծուխի կանի թշուառին: Խոհեմութիւնը պահանջում է կուչ եկած սպասել հովուի գալուն:

Ազատարար հովիւ հանդիսացաւ այստեղ Հասրաթը. նա տեսաւ, որ փեսան ուշանում է իր հրամանը կատարելու, նա զգաց, որ իւր հաւատարիմ գամփռը մի ամենաաննշան սխալ քայլի է սպասում մի անկոչ օտարականի կողմից իւր հարուածի ոյժը ցոյց տալու, մօտեցաւ Վարդանին, ականջիցը բռնեց և ոչ գաղանի,

այլ անմուռնջ դառան նման բերեց իւր թագաւորական թախտին կանգնացրեց:

— Հիմի հօ տեսնում ես, միրզայ աղայ, որ խաղաղութիւնը տիրեց, ասաց Հասրաթը Փարմատոնին, դէ համեցէք նստիր, ճաշ անուշ արա:

— Ո՛չ, թող էս բազմութիւնն իրանց «էֆ» անեն, իսկ դու, տանուտէր, առ ասածս չորս վկային, Հասրաթին ու Վարդանին և զնանք մեր խուզարկութիւնն անենք, տեղիցը կանգնելով՝ կարգադրութիւն արեց Փարմատոնը:

— Տանուտէրն իմ ու փեսիս կողմից երաշխաւոր է, աղայ, խօսքը շարունակեց Հասրաթը, որ մենք փախչողը չենք, էլ մեզ ո՛ր ես տանում, էս դո՛ւ, էս իմ տո՛ւնը, քրքրի ամէն քունճ ու սլոճախ. տուն, դուրս, պարտէզ, բակ, գոմ, ցախանոց, գործարան ու մառան:

— Ո՛չ, պատասխանեց Փարմատոնը, ես միայն մի տեղ ունիմ պտուելու. դուայ՝ լաւ, չգտայ՝ կը թողեմ կերթամ. թող կանայք իրանց նստած սենեակից դուրս գան, նորահարսի բաժինքի մեծ սնդուկի բանալին կուզեմ ու հարսի համար կապած թախտի մահիճների տակը պիտի փորեմ, մէկ էլ նորապսակների անկողնի կապոցը

պիտի բանամ,— շեշտեց յանդգնաբար Ֆարմատոնը Բաթին, հսկում է հաշիվը և հանդիմանում էր իր անհանգստությանը:

— Աղայ, հերիք չի, դու ամօթ, պատկառանք ու խղճմտանք չունիս, կոկորդումը կատարութիւնից խօսքերն ընդհատելով արտասանեց Վարդանը. հապա դու նորափեսայ չես եղել, քո նորահարսը բաժինքի սնդուկ ու անկողին չի ունեցել, ի՞նչ ես տուել մեզ, որ չես կարողանում յետ առնել. զնն, փորձանքդ քաշի, հեռացրո՛ւ, բաւական է, կուժը որ մինչև բերանը լցուեց, կը թափուի. ասում եմ, զնն, քանի ուշ չէ...

— Չայնդ կտրի՛ր, փեսայ, էս օր ես քո հայրդ էլ եմ, աներդ էլ, ես որ կամ՝ քեզ խօսք չի հասնիլ, հրամայում եմ քեզ՝ պապանձուիս, լուռիս, լիւռիս, ինչ միըզա աղէն կամենում է, թող է՛նպէս լինի, ընչի՛ ես նեղանում, որ սա ուզում է նշանաճիւղ բաժինքը տեսնել, ազապ տղայ հօ չի, ինքն էլ կնոջ տէր է, իր խանութն էլ շորեր ունի, մաքուր փոխնորդներ ունի:

Այս անգամ դառը հեղնութեամբ և հայրական ինքնասիրութեամբ շեշտեց հասրաթը և

կոկորդումը խեղդեց համեստութեան սահմանն անցնող խօսքը:

— Ո՞նց թէ իմ ամուսնու անունն էստեղ մէջ կը բերէք, գոչեց Ֆարմատոնը, ես ձեզ ցոյց կը տամ, թէ ի՞նչ կը նշանակի ճշմարտութիւնը կին ու հասարակ զիւղացու հարսը. այո՛, ես իրաւունք ունիմ հարսի առագաստը քրքրել, հարսանիքը խանգարել, նորահարսութիւնը փեսայի քթովը բերել, նորահարսի շահը իր փեսայի զլխին ճղել, ամօթն ու պատկառանքը մէջտեղից...

Ֆարմատոնի վերջին խօսքն ամբոխի աղմկի մէջ չքացաւ, ընդհանուր զրուանք և տհաճութիւն յառաջացաւ, մի քանի երիտասարդներ ինքնաբերաբար բռնեցինքնիրը սեղմեցին և պատրաստ էին յարձակուել Ֆարմատոնի վերայ, եթէ տանուտէրը չբռնէր աքցիկէն թեւից և աղաչ պաղատ անելով՝ դուրս չտանէր:

Ֆարմատոնի ետեւից դուրս ելան և զազախները:

— Սիրելիք, բարձրաձայն գոչեց տէրտէրը, Աստուած սիրողը տեղիցը չջարժուի և հանդստանայ. սիրելի Վարդան, պարոն հասրաթ, դուք էլ հանդարտուեցէք, թողէք ես դուրս գնամ, մի

քանի խօսք ասեմ միրզա Փարմատունին. ես յոյս ունիմ, որ չարը կը խափանուի, բարին կառաջնորդուի:

Տէրտէրի խօսքերը ցանկալի ազդեցութիւնը գործեցին. վհատուած սրտով, վշտացած դէմքով ամենքն սպասում էին քահանայի ներս գալուն:

Սրգարեւ, շատ չքաշեց, մի մարդ տուն եկաւ և Հասրաթին դուրս կանչեց:

Ի՞նչ անց կացաւ դուրսը, ընչէ՞ր խօսուեցին ու գործուեցին, մի առ ժամանակ զաղտնիք մընայ, միայն թէ ամէնքը զարմացան, երբ տէրտէրի ու տանուտէրի ուղեկցութեամբ՝ ներս եկաւ միրզա Փարմատունը:

— Հասարակութիւն, ձայն տուեց տանուտէրը, մենք ձեր բոլորի կողմից խնդրեցինք միրզա աղին, որ հիմի ամէնքիս հանդիստ թողի, չնեղացնի, այսօր գնայ իր գործին, իր պաշտօնին ու հինգ օրից շնորհք բերի, Հասրաթի տունը սլոռտի: Ես խոստացել եմ, որ ինքս Հասրաթի տան վրայ պահապաններ կարգեմ, որ սա մինչև միրզա աղի գալը՝ մի կաթիլ արագ իրաւունք չունենայ դուրս տանելու: Չնորհակալ ենք, միրզա աղէն մեր խնդիրը լսեց ու իր ո-

տովն եկել է ձեզ ուրախացնելու և գնալու. շնորհակալ էք թէ ոչ:

— Չնորհակալ ենք՝ շնորհակալ ենք, հնչեց տան մէջ աղաղակը:

— Ուրեմն դուք ձեր ուրախութիւնը շարունակեցէք, տէր հօր ու մեր տանուտէրի խնդրանք ես չուզեցայ հասարակութեան սիրտը կոտրել, ասաց և դարձեալ տանուտէրի ուղեկցութեամբ դուրս գնաց Փարմատունը առանց բարեւ մնայ ասելու:

— Երեւի շան բերանը ոսկոր ձգուեց, հարց տուին ոմանք տէրտէրին:

Քահանան խօսք չասաց, միայն գլուխը դրականապէս տմբտմբացրեց:

Մի քանի րոպէից՝ ամեն ինչ մոռացուեց, ուրախութիւնը ոչ ինչպէս յառաջ, բայց շարունակուեց, ծիծաղում ու զուարճալի կատակներ էր անում Հասրաթի:

Մէկը միայն թթուած, ամպած ու մրրրած էր:

Այդ մէկը թագաւոր Վարդանն էր:

Վրիժառութեան ծարաւը նրա երեսին պարզ արտաւիայում էր:

Է.

Ասած է. աշխարհքն այն օրը վերջ կը լինի, երբ այլ ևս աշխարհի երեսին լաւ մարդ չի մնալ:

Աստծուն փառք, զեռ մենք այդ օրին չենք հասել. բարի մարդիկ ամէն ազգի, ամէն դասակարգի մէջ էլ գտնուում են. մի տեղ շատ ուրիշ տեղ քիչ, բայց կան:

Աքցիզիները մէջ ևս լաւերը կալին:

Ոտքդ դիր Երևանի նահանգը, Սևանայ ծովից բարեւ տար Արաքսին ու Ախուրեանին, հարց ու խնդիր եղիր ամէն տեղ աքցիզի Լաւաղի մասին և կը լսես, որ տեղից վեր Կենտրոն նրան օրհնում է, նրա արեւովը երգուում. — այ քեզ մարդ, այ զիւղականի ցաւերն իմացող Աստծու օրհնած հոգի:

Եթէ Լաւաղէն գայ, արաղիդ գործարանը քանդի, քարատակի, պղնձերդ կոտրատի, արա-

ղիդ տկերը խանչալով ճղճղոտի ու երեխէքանցող ապրուստը ջրի պէս գետնի երեսովն առու անի, պռօշդ պռօշիդ չես տալ, ուրախ կը լինիս, կասես՝ կերևի լաւն էս է, կերևի քօ լաւն է կամենում, քեզ աւելի ցասում պատուհասից է ուզում ազատել:

Թէ չէ, սկսի չգիտէ, որ աքցիզի միրգա Փարմասոնները նման տասնաւորներին զլի պէս իր դրանը շինքները ծռած սպասել տուող Լաւաղէն՝ իր բարի ոտքը մեր աշխարհքի հողի վրայ դրած օրից՝ մի աղամորդու վնաս չի տուել:

Գնում ես քաղաք, որ գործարան բաց անելու իրաւունք առնես և երբ իմանում ես, որ Լաւաղէն քաղաքումը չի, աշխարհը զլխիդ մթնում է: Հաստատ գիտես, որ բերած փողդ հերիք չի գալու, որ համ աքցիզ տաս և համ մի քանի օր, գուցէ շաբաթ, քաղաք տեղը քեզ համար ապրուստ անես:

Ինքան աքցիզի Կենտրոնէն գնա ու արի, որ հողիդ թռչի, հա կաց ու Կենտրոնի պատերի տակին ամառը ճանճ կուլ տալով, ձմեռը շնդող տալով՝ սպասի, որ մի օր քեզ կանչեն,

աքցիդդ առնեն ու հրամանդ ձեռդ տան, որ
գնաս գործարանդ բան քցես:

Զ՛ուր են, զ՛ուր դատարկ յոյսերը. խելք ու-
նիս՝ իրիկունը՝ արևը սարերի քամակին անուշ
քուն մտնելուց յետոյ՝ դու գնա զիւանատան,
աւել տուողից մինչև միրգէքն ու զրազիրները
տես, նրանց սիրտը շահիր. յետոյ միւս օրը,
կամ երեք չորս օրից՝ հոգիները միտը կը բերեն,
քեզ ճանապարհ կը դնեն. երեսիդ էլ մի քանի
քաղցր քաղցր Աշտարակցի իսպիրենց Պօլինի
օրհնութիւններ էլ պաշար կը տան:

Ի՛նչ սառներես մարդիկ են, մինը չի՝ նը-
րանց՝ մէջ, որ քո հացդ կերած չլինի, երկուսը
չեն, որ քո սառը ջուրը խմած չլինին. էնտեղ
ուտում են, էստեղ հայհոյում են:

Բայց թող քո բաղդիցդ՝ Լաւաղէն քաղա-
քումը գտնուի ու քո հատ կոպէկդ աւելի
ծախսուի:

Հինգ ըոպէ չի կանգնացնիլ. մի աչքն իր
զրջի ծալրին է մտիկ տալիս, մէկէլը գործարա-
նատէրերի սպասելու տեղին: Հէնց որ մի շուաք
երևում է, իսկոյն հրամայում է ներս կանչել,
խնդիրն իմանալ, կատարել ու ճանապարհ դնել:

գնալու էլ՝ ձեռքդ բռնում է, երեսիդ ծիծաղում
է և գործիդ յաջողութիւն բարեմաղթում:

Էս դեռ քաղաքումն է. հապա զիւղճմը,
քո գործարանդ մտած ժամանակ, կարծում ես,
թէ յաջողութիւնը ոտնաւորուեց, տունդ՝ մտաւ:

Ժպտալով, բարև տալով, ծնող հօրդ պէս
հալտ ու հալտ հարցնելով՝ մօտենում է Լաւաղէն
արաղիդ օջաղին, լիքը տկերիդ, բաց ու կնքած
կարասներիդ, հարցնում, տեղեկանում, գործդ
աջ գնացած ժամանակը՝ հետդ ուրախանում,
ձախ եղած տեղը՝ մխիթարում, սիրտ տալիս ու
յետոյ հետդ մի կարգի ծունկը ծալում, նստում,
քաղցր մաուլահաթներով հացդ վայելում, գինիդ
անուշ անում:

Անճշ մարտական, իր մօր կաթի պէս
հալալ:

—Ա՛խ, երանի չէր, ասում ես մտքումդ,
մի հատ Լաւաղայ չը լինէր մեր երկրումը, ո՛ւր
էր, թէ բոլոր աքցիդչիքը Լաւաղայ դառնային.
Ի՛նչ կը լինէր, որ աչքի կոյր գրող միրգա Փար-
մասոնը Լաւաղի կտրած ու շպրտած եղունգի
չափ ազնիւ սիրտ ունենար, ի՛նչ լաւ կը լինէր,
որ Լաւաղէն հազար կտոր լինէր ու մի կտորը

Երևանի՝ Կոմիտասի աթուռին բաղմած՝
աքցիզ աստանար ու գործարան բանալու հրա-
մաններ բաց թողէր, միւս կտորները ցրուէին
գիւղերն ու գործարանները քննէին:

Աստուած, երկինք, գետինք, ծով, ցամաք,
որ ինչքան էլ աչքածակ մարդ լինէր, իրան
չէր թույլ տալ մի բաժակ արաղի ծուռն աչքով
մտիկ տալ, աքցիզուց թագցնել:

— Հնչի:

— Որովհետեւ աքցիզը խճմտանքով է դըր-
ուած. եթէ ինչքան օրէնքը վճուել է, էնքա-
նը վճարես, քո բոլոր ծախսդ ու չարչարանքդ
էլ դուրս կը գայ, տակի մնացածովն էլ տունդ
կը կառավարուի, քսակդ էլ միշտ լիքը կը լինի:

Մարդ ենք, մեղանչական ենք, պատահում
է, որ չար սատանէն մոլորեցնում է, ազահու-
թիւն ենք անում, մի քանի տիկ արաղ ենք
թագցնում:

Եթէ Ֆարմասոն բէգի պէս աքցիզիքն են
վրայ հասնում, հոգիները դուրս է գալիս, միուր
չենք գալիս, ձեռքներս պատն ենք քսում, ու-
րանում ու տակիցը գէշ հոտ չը բարձրանալու
համար՝ թագցրածներին կիսի, կամ չարէքի ար-

ժողութիւնը ձեռքերն ենք կոխում, հեռացնում,
կամ թէ Երևանումն— իրանց տներումը մեր հա-
շիւը վերջացնում:

Բայց ե՞րբ որ ինքը Լաւաղէն է գալիս, նա
դեռ իր բերանիցը ոչ մի խօսք բաց չը թողած՝
մենք ինքներս ենք մեղայ գալիս, արածներս
տէրտէրի պէս իրան խոստովանում:

— Էս մի անգամը ներում եմ, միւս ան-
գամը չըլսեմ, չիմանամ, ասում է Լաւաղէն ու
խօսքը փոխում:

— Գլխիդ մեռնեմ, աղայ, էն ո՞ր որդամեռը
թագաւորի հատ կոպէկին խէթ աչքով մտիկ
կը տար, պատասխանում ես իրան, եթէ միրգա
Ֆարմասոններն անել չըտալին, կամ հէնց իրանք
չըսովորցնէին: Եթէ չը գողանանք ու չըթաղ-
ցնենք, աքցիզը տալուց յետոյ՝ նրանց անկուշտ
ու ծակ աչքն էլ կշտացնենք, էն ժամանակը
սաշտ ու մաղներս օճորքին պիտի կապենք,
երեխէքանցս քաղցած պիտի կոտորենք. էն ժա-
մանակը մէջը փուչ՝ օխտը հատիկ. էլ ուր ենք
տանջուում, հոգեհան լինում. տնաքանդները
հոգի չալիտի տան. ունիս տուր, չունիս տուր:
Ի՞նչ անենք ուրեմն, որ չըգողանանք:

Խոր ու դառն ախ է քաշում այդ ժամանակը Լաւաղէն ու լուռ, թուքը կուլ տալիս, խեղճ մարդն երեսը շրջում է, որ աչքից կաթած արտասուքը դու չընկատես:

Էսպիսի մարդին ո՞վ չի սիրել:

Այո՛, սիրում էին ամենեքեան Լաւաղին և ուսանանայով էին ընդունում. հէնց որ գիւղի փին երևում էր նրա բարձր, նիհարած, փոքր ինչ ծաղկատար, բայց քաղցր դէմքը, երեսայքն ընդ առաջ էին վազում, ձիու սանձը ձեռքիցն առնում էին և շրջապատած՝ հարադատ հօր գգուանքով բերում, տանուտէրի դրանն իջեցնում, ձեռքերը պաշտօնաբար էին:



Ը.

Երեկոյ է, մթնած, մրրած ու ամպամած երեկոյ:

Վարդանի հարսանիքը վերջացել է: Իդպէս հարսանիքի ոչ սկսուելն էր ցանկալի, ոչ վերջանալը: Տիրահոգակ պսակաճաշից լետոյ՝ դեռ երկու օր պիտի տեւէր ուրախութիւնը, դեռ երեք հացկերոյթ կար տալու:

Ծէսն իւր կարգին, իբր թէ, շարունակուեց. բայց ինչ հարսանիք, մահենիքի էլ չէր նմանում. հրաւիրուածները քառորդը ներկայ չէր լինում. մինչև ամէն մէկի դուռը հինգ անգամ չէին ծեծում, ոչ ոք սիրտ չէր անում զնալ:

— Կերևի, էդ տան վրայ մի անէծք կար, թէ չէ էդպէս անբաղդութիւնն ինչի կը գար:

Այս խօսքերն էին փափսում պատուելի ծերունիքը և հարսանիքատանից փախս տալիս, ջահէլներն էլ ծերերին էին հետևում:

Ինչ և իցէ, թշնամու սրտով չըլինելու համար՝ հարսանիքը չընդհատուեց, մի տեսակ մինչև վերջը շարունակուեց ու պրծաւ:

Հարսին տարել են փեսայի տունը:

Ուղարկել են քահանայի ետեւից, որ գալ թագը վերցնի. այնուհետև նորահարսն այն տան ընտանիքի անդամն է: Նորահարսն ու նորափեսան կը մօտենան, տան մեծերի ձեռքերը կը համբուրեն ու դրանից յետոյ՝ իրանց տունն է, իրանց դուռը:

Եւ որովհետև Վարդանն էր ու իր չոր դուռը, իրաւոր ընտանի չունէր, մի երկու ամենամօտ պառաւ կանայք սպասեցին քահանային, որ վերջին անբծութեան օրհնանքը տան, ծէսը կատարեն ու քաշուին:

Տէրտէրն ուշացաւ. մութը գետինը բռնեց:

Վարդանն անհամբեր սպասում է: Հինգ տարի էր նա սպասում այս օրուանը. հինգ տարի նա սիրում էր Մարջանիկին, բայց երկուսը դէմ առ դէմ, երեսէ երես, պուռնգը պուռնգին չէին տուել, իրար մի քաղցր, կամ դառը խօսքը չէին ասել, Վարդանը չգիտէր, թէ իւր կեանքը

քըն ու մահը, իր հոգեհանը լեզու ունի, թէ համր ու մունջ է:

Մօտեցել է երջանիկ ըուպէն և, սատանական, տէրտէրն ուշանում է:

Չորս հինգ հոգի միմեանց ետեւից ուղարկուած են քահանային հրաւիրելու, բայց գնացողը հոյեան ագուաւի նման գէշով էր ընկնում. տէրտէրը նշանդրէքում էր, գնացողն էլ այնտեղ մնում էր:

— Թէպէտ նորափեսան՝ թագը չվերցրած՝ իրանց շեմքից ոտ չպիտի դուրս գնի, բայց ամէնքն իրանց դուռը ծածկել են, իրանց բունն են մտել, շատերը հիմի ճրագները հանգցրած՝ երկու քուն քնած կը լինին, ինձ ո՞վ պիտի տեսնի, ինքս կը գնամ, տէրտէրին կը բերեմ, վճուեց Վարդանն ու պառաւներին նորահարսի մօտ թողեց, դուրս գնաց:

Այս ի՛նչ է: Վարդանենց հարեւան տանուտիրոջ դրանն երկու երեք ձիաւոր են երևում: Ո՞վ պիտի լինին էսպէս անժամանակ, լսելի ձայնով ինքն իրան հարց տուեց առանց ոչ ոքից պատասխանի սպասելու Վարդանը:

— Աքցիզի է, տանուտէրի դուռն է ծե-

Տում, պատասխան եղաւ նրան միտութեան մէջ, հէնց իմանաս, միւրդա Փարմասոն բէզն է, նրա նման է երեւում. ո՞վ գիտէ, էլ ո՞ւմ տունը քանդելու միտք ունի. դրա ոտը կոտրուէր, մեր գիւղը չմտնէր: Ես հեռուից տեսայ ու ոտներիս զօռ տուի. մի քիչ թաղցրած արաղ ունինք, գնամ տեղաւորեմ, թէ չէ չարը հակառակ է, շան պէս հոտ է առնում, լանկարծ կը դայ կը պտըռտի, կը դտնի ու էն ժամանակը գլուխներս էլ եթէ ծախենք, դրա ճանգերիցը չենք ազատուիլ. բարի բանի հօ չի դալ տնով քանդուածը, եթէ միտքը չար չըլինի, էս կէս գիշերին ի՞նչ է տանից տեղից հեռացել, գիւղերն ընկել:

Պատասխանողը մի երիտասարդ էր, որ ասաց ու չկանգնեց, հեռացաւ գնաց իւր դործին:

—Ա՛խ, Փարմասոն բէզն է, վայ, դրա տունը բաբելական կրակը մտնի, կայ, չկայ՝ իմ և աներոջս համար է եկել, օձ, օձի ձագ, անցեալ օրուանը չի մարսել. ասում են շատ նախանձոտն է, տրաքում է, եթէ լսում է, որ իրան կնոջիցը սիրունը մի տեղ կայ: Հալբաթ Մարջանիկիս գեղեցկութիւնն է դրա աչքերը

ծակել, հալբաթ՝ անցեալ օրն եկել էր, որ պսակըս խափանի, բայց ուշ հասաւ:

Չէ, աղայ Փարմասոն, չէ, ես չեմ թողալ, որ քո սրտի չար խորհուրդը կատարուի, դու ինձ չես ուզում ուտացնել, ես քո կերածդ գլխիդ հարամ կանեմ, դու ինձ ուզում էիր սեւապսակ անել, ես քո խանում կնոջը սեւալաջակ կանեմ, ես...

Վարդանն շտապ շտապ տուն լետ դառնալով՝ սպառնում էր վերոյիշեալ խօսքերը:

Ոչ ոք չիմացաւ, թէ ինչպէս տուն մտաւ, ինչպէս պատից իջեցրեց «սփռու» կոչուած հրացանը, ինչպէս դուրս ելաւ և ո՞ւր գնաց:

Յանկարծ հրացանի պալթիւնի հետ՝ մի աղէկտուր հառաչ բարձրացաւ:

—Ա՛խ, ես գնդակահար եղայ, հաղիւ լըսուեց տանուտէրի դրան մօտ կանգնած տեղից:

Ահագին թնդիւնով մի մարդ գետին գլորուեց:

—Քո հախն է, ուրիշների համար փոս փորես, ինքդ մէջը կընկնես, լսուեց այս ձայնը դէպի վէր ընկածը վաղող մի անյայտ անձի բերանից:

Վարդանն էր անողոք անձնաւորութիւնը, որ սպանեց և հրացանը ձեռքին վազեց դէպի իւր զոհը:

— Ե՛ս էի, ես, միրզա Փարմասոն, ես էի քո արեւդ մէր մտցնողը, ասաց մարդասպանը և անպարտելի ախուրեանի նման՝ հրացանի կոթը սիւն տուեց իւր հակառակորդի կրծքին ու հրպարտ հպարտ փառ փառ ծիծաղում էր:

— Վարդան, քո տունը քանդուի՛, էդ ի՛նչ արիր, ասաց տանուտէրը, որ քահանայի, գզրի և երկու ուրիշների հետ կանգ առաւ գետնին տարածուած դիակի գլխին:

Նրանք նշանդրէքից էին գալիս:

— Ա՛րագ, ճրագ դուրս բերէ՛ք, հրամայեց տանուտէրը:

— Ա՛յո՛, ես էի, տանուտէր, ես, ես իմ թըշնամու սիրուն կնոջը սեակոլով արի, թող իմ նշանածս էլ սեապսակ մնայ: Հ՛ր, Փարմասոն, ո՛նց էր, մեծ քնով քնեցիր, թէ դեռ մէջդ շունչ կայ: Ի՛լ ախ ու ոխ չի լսուում, պրծել ես, սատանի բաժին ես եղել. հրացանով նշան դնողը ես էի, մուրթն էր, բայց մի աստղի լոյսն էլ հերիք էր սրտիդ տեղը գտնելու համար, կուռս

կը կտրէի, եթէ իմ գնդակը սխալուէր, գնա հիմի...

Վարդանի վրիժառական բացականչութիւնները բերանումը սառեցին, երբ ճրագի լուսով նա ճանաչեց իւր զոհին:

— Ա՛խ, Լաւաղէ՛ն, վա՛յ իմ կռներս թուլանար, իմ օրս խաւարէր, ո՛նց որ քո օրը սեւացրի, Լաւաղա՛յ:

— Լաւաղէ՛ն, ա՛խ, միաձայն գոչեցին ամենքեան:

— Գնա՛, Փարմասոն, գնա՛, դու յաղթեցիր, աղաղակեց Վարդանն ու ընկաւ յաւիտենական քնով հանգստացած անբաղդ Լաւաղի վրայ:

— Ես արենպարտ եմ, մարդիկ, ձայնն երկինք էր բարձրացրել Վարդանը՝ սառը դիակին համբոյրներ շռայլելով, ես Երեւանայ երկիրը զրկեցի իր ազնիւ սիրեկանից. ես կարծեցի, թէ աշխարհքին լաւութիւն եմ անում, կարծեցի, թէ հասարակութիւնն ազատում եմ իր աչքի գրող Փարմասոն բէգից, տակիցը դուրս եկաւ, որ ես հասարակութեան թշնամին դառայ. բռնիր ինձ, տանուտէր, կռներս քամակիս կապիր, ոտներս *թէ՛ն՝ ձգեցէք, էգուց՝ որ լոյսը բացուի,

աշխարհքի աչքի առաջին, աշխարհքի տէր ու տիրական սիրելու սպանողին կախեցէք...

— Եկա՛ր, տէրտէր, էստեղ է՛ս, նկատելով ժողովուածներին մէջ քահանային, որ տանուտէրի հետ նշանդրէքից էր եկել, շեշտեց Վարդանը. եկար հա՛մ, լա՛ւ իրիկնահաց ունէիք, կեր ու խումբեղ տե՛ղն էր. ո՛ւր էիր մինչև հիմա, հերիք չէ՛ր, որ ինքդ չեկար, իմ ուղարկած հինգ մարդին էլ ջահա՛ռ քցեցիր, հա, իրաւունք ունէիր չգալու, երևում է՝ կերակուրները համով, գինին անուշ է եղել. այսուհետև զուր ես նեղութիւն քաշել, էլ ուշ է հիմի. արի էս արդար ննջեցելքի գլխին «Հոգւոց» ասա ու ինձ խոստովանացրու... Չէ՛, տէրտէր, չէ՛, քո խոստովանացնելդ ինձ հարկաւոր չի, էս իրիկուն՝ էս բազմութեան մէջ, էգուց ցերեկով՝ աշխարհքի առաջին բարձր ձայնով պիտի գոռամ՝ որ ի՛նչ մեղք չունիմ, իմ մեղքս իմ ձեռով դրախտն ուղարկած էս անբաղդ մարդն է... Լսեցէ՛ք, մարդիկ, լսեցէ՛ք, ընկեր հարեւաններ, Լաւաղին ինքս եմ սպանել, յանկարծ չեմ տուել, կարծեցի՝ միրգա Ֆարմասոնն է, ուզեցի սրտիս մուռը

(վրէժ) հանել, ողջ Գառնիբասարը զագանի տամներից փրկել...

Բոլորովին չընդիմացաւ Վարդանը, թույլ տուեց, որ կռներն ու ոտները կապեն:

Նա մի վերջին համբույր էլ տուեց Լաւաղի սառը ճակատին և տեղիցը կանգնեց:

— Մի խօսք, մի խօսք էլ, տանուտէր, լետոյ ձեր կալանաւորն եմ, գոչեց Վարդանը, երբ ուզում էին իրան տանել:

— Սպասեցէ՛ք, տղայք, հրամայեց տանուտէրը:

— Հիմի արի՛, տէրտէր, արի՛ քո ձեռով կապած նարօտը վզիցս բաց արա, քո դրած խաչը զգակածալիցս հանիր, ասա սեւապսակ Մարջանիկին, որ ես էլ թագաւոր չեմ, բայց ինքը զեռ թագուհի է... Ա՛խ, մնաս բարև, Մարջանիկ, ների՛ր ինձ, որ զուր տեղը քեզ գլխացաւանք տուի, աղջիկ եկար հօրդ տանիցը, աղջիկ էլ լետ դարձիր, քո ճակատի զրուած բաղդը ես չէի, գնա քո բաղդի ետևից, գնա քո բաղդը գտիր:

Քահանան խաչն ու նարօտը վերցրեց, արենպարտ յանցաւորը կալանաւորուեց:

Երեք օրից՝ մնացածը աշխարհքին յայտնի
եղաւ:

Երեք օրից՝ Երևանայ բերդի բակումը՝ բան-
տարկեալներին ներկայութեամբ՝ կախեցին մի
մարդասպանի:

Վարդան Թարվէրդովն էր նա:



